ՀԷՍՍԷՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ARMENISCHER
KULTURVEREIN
IN HESSEN e.V.

Gegründet 1968
Gemeinnütziger Verein

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Վարչութիւն*

Շրջաբերական 2015 / #4 Ֆրանկֆուրտ, 28.09.2015

**Սիրելի միութենականներ և հայրենակիցներ,**

Հէսսէնի Հայ Մշակութային **Մ**իության վարչությունը սիրով Ձեր ուշադրությանն է ներկայացնում միության հետագա ծրագրերը.

2015թ. հոկտեմբերի 11-ին, կիրակի, ժամը՝ 12:00-ին

**ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ**

Սուրբ պատարագը կմատուցվի Ev. Kirche Hausen-ում:

Պատարագից հետո

ժամը՝ 14:00-ին

Կհանդիպենք սուրճի և աղանդերի սեղանի շուրջ:

**Հասցեն՝** Gemeindesaaal, Alt-Hausen 3-5, Frankfurt-Hausen:



2015թ. հոկտեմբերի 17-ին, շաբաթ, ժամը՝ 12:00-ին

**ՖՐԱՆԿՖՈՒՐՏԻ՝ ԳՐՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԱՎԱՃԱՌԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ**

Այս օրը մենք միասին կայցելենք Ֆրանկֆուրտի՝ գրքի միջազգային տոնավաճառին մասնակցող Հայաստանի տաղավարը:

Միության հանդիպման վայրն այդ օրը կլինի փակ:

**Հասցեն՝** Halle 5.0, Stand A127, Messe Frankfurt

2015թ. հոկտեմբերի 17-ին, շաբաթ, ժամը՝ 18:00-ին

**ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ**

Օրվա հյուրերն են. հայազգի հեղինակներ՝ Լարիսա Գևորգյանը և Էդվարդ Ֆիչիչյանը, ովքեր կներկայացնեն իրենց գրքերը, որոնց թեմատիկան վերաբերում է 100 տարի առաջ Օսմանյան Կայսրության իրագործած ցեղասպանությանը:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Վարչութիւն*

Շրջաբերական 2015 / #4

Ֆրանկֆուրտ, 28.09.2015

Լարիսա Գևորգյանը կներկայացնի նաև մեկ այլ գիրք՝ Արցախի վերաբերյալ:

**Հասցեն՝** Café Anschluss, Hansaalle 150, 60320 Frankfurt

2015թ. նոյեմբերի 14-ին, շաբաթ, ժամը՝ 15:00-ին

**<u>ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀԱԴԱՇՏ</u>**

Այս տարի մեր շաբաթօրյա դպրոցի սաների հետ կայցելենք սահադաշտ, որտեղ միասին չմուշկներով կսահենք և կանցկացնենք հաճելի և ուրախ ժամանակ:

**Հասցեն՝** Am Bornheimer Hang 4, 60386 Frankfurt am Main

2015թ. դեկտեմբերին,





**<u>ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԵՄՈՒՏԻ ՀԱՆԴԵՍ</u>**

Տարեմուտի տոնական հանդեսով՝ երգով ու պարով, մեր դպրոցի սաները կդիմավորեն Ձմեռ-Պապիկին և Ձյունանուշին:

**Տեղի և ժամի մասին տեղեկությունները Ձեզ կտրամադրենք հնարավորինս շուտ՝ նամակի տեսքով, ինչպես նաև մեր ինտերնետային կայքում:**

(հնարավոր են ծրագրի փոփոխություններ, հետեւեք մեր ինտերնետային կայքին՝ www.armenia.de)

Միության հանդիպման վայրը բաց է ամեն շաբաթ օր՝ 15:30-ից մինչև 19:00: Միության հայկական շաբաթօրյա դպրոցի դասընթացները շարունակվում են ժամը 15:45 – 18:00:

**Միության հասցեն՝** Hamburger Allee 52a, 60486 Frankfurt am Main:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Վարչութիւն*

Շրջաբերական 2015 / #4 Ֆրանկֆուրտ, 28.09.2015

## <u>ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ – ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ</u>

### Հայոց ցեղասպանությունը գերմանալեզու թերթերում 1912 - 1922 թվականներին:




Գերմանիայի օժանդակությունը ցեղասպանությանը:
Այս գրքում ներկայացված են փաստեր, որոնց մասին այն ժամանակ թերթերի միջոցով տեղեկացավ Գերմանիայի հասարակությունը:
Շուրջ 200 հոդվածներ փաստում են, որ Գերմանիան հենց սկզբից տեղյակ էր Օսմանյան կայսրության ծրագրած ցեղասպանության մասին:
Այդ հոդվածների շնորհիվ էլ ձևավորվում է այդ ժամանակվա հասարակության կարծիքն ու ցուցաբերվում նրա վերաբերմունքը , ինչն էլ լրացնում է այն փաստաթղթերը, որոնք արդեն հրատարակվել էին Գերմանիայի Auswärtiges Amt-ի կողմից:

### Հավերժում ապրող հորս՝ Արցախից




Գիրքը արցախյան պատերազմին մասնակցություն ունեցած հերոսների մասին փաստագրական վավերագիրք է: Հեղինակն անդրադարձել է Կոմանդոսի, Դուշման Վարդանի, Սամվել Խաչիկյանի, ԱՍԱԼԱ-ականներից Մոնթե Մելքոնյանի ու Վազգեն Սիսլյանի, հետախույզ Արտակ Բագրատյանի և քաջագործությամբ հայտնի այլ հերոսների կերպարներին: Վավերագրքում տեղ են գտել պատերազմի տարիներին Արցախին անհավանական օժանդակություն ցույց տված ամերիկահայեր Ջորջ և Քառոլան Նաջարյանները: Գիրքը արդեն թարգմանված է

անգլերեն: Գտնվում է տպագրության փուլում:

## Ես տեսայ իմ երկիրը




Փաստագրական, վերլուծական վավերագիրք է՝ տպագրված դասական ուղղագրությամբ: Գրվել է պատմական Հայաստան կատարած 2003 թվականի. ուխտագնացությունից հետո, հայ ժողովրդի անցյալի, հայոց ցեղասպանության բազմակողմանի վերլուծականն է: 2006-ին Բեռլինում հրավիրված միջազգային գրական համաժողովին, երբ ընթերցվելու էին տարբեր ազգերի համաշխարհային արձակի նմուշներ, գերմաներենով հատվածներ են ներկայացվել հենց ա՛յս գրքից: Ըստ <<Արմենպրեսս>> գործակալության արդյունքների՝ 2015-ի հուլիսին <<Ես տեսայ իմ երկիրը>> մտել է երևանյան բեսթսելլերների տասնյակի մեջ ու զբաղեցրել առաջին հորիզոնականի երկրորդ տեղը: